ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով համակարգչային օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԷԱՃԱՊՁԲ-ՀՕՆ-18/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 24.10.2018թ. ժամը 12-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Հովհաննիսյանը, Ա.Թումանյան, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը/ կցվում է/, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները՝ eauction.armeps.am համակարգի միջոցով և թղթային /գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

- Հաշվի առնելով՝ որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ -ի կողմից տրամադրված տեղեկատվությունը համապատասխանում է հրավերի պահանջներին, իսկ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են թերացումներ, մասնավորապես՝ Հավելված 3-ում բացակայում է կազմակերպության անվանումը և ''Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը'' տողը, և Հավելված 2-ը կցված չէ համապատասխան տեղում, ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ կետի համաձայն՝ ծանուցել **Կոմպլենդ ՍՊԸ -ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:
- Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. հոկտեմբերի 26-ին, ժամը 12:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

Այսօր համակարգի միջոցով ծանուցել **Կոմպլենդ ՍՊԸ -ին՝** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ.Հովհաննիսյան

_____ Ա.Թումանյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով համակարգչային օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԷԱՃԱՊՁԲ-ՀՕՆ-18/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 26.10.2018թ. ժամը 12-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Հովհաննիսյանը, Ա.Թումանյան, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից շտկված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները՝ eauction.armeps.am համակարգի միջոցով և թղթային /գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

- Հաշվի առնելով, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝ ընթացակարգի **1, 2 չափաբաժինների** համար ընտրված մասնակից ճանաչել **Կոմպլենդ ՍՊԸ -ին:**
- ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հայտարարել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
- Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
- «ՀՀՔԿԴ-ԷԱՃԱՊՁԲ-ՀՕՆ-18/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ.Հովհաննիսյան

_____ Ա.Թումանյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան